

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կես տարվանը 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպեկով:
Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ:
Օտարադարձարացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Мелк»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:
Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր թաւին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Պատմական նկարների մանկավարժական նշանակութիւնը: Նամակ Շամախու: Նամակ Սփնիկի: Նամակ խմբագրի: Ներքին լուրեր: ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Պարսկաստան: Ֆրանսիա: Բոլորիս: Աւստրո-Ունգարիա: Չէրոգորիա: Արտաքին լուրեր: ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ: ՀԱՌԱՅԻՒՆՆԵՐ: ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ՆԿԱՐՆԵՐԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆ

Պատմական նկարները կամ ֆոտոգրաֆիաները մեծ մանկավարժական նշանակութիւն ունեն ուսում առնող երիտասարդութեան համար: Այդ պատճառով եւրոպական ամեն մի բարեկարգ դպրոցում, պատմական նկարները կամ ֆոտոգրաֆիաները համարվում են օժանդակիչ միջոց երեխաներին պատմութիւնը սովորեցնելու, աւելի խոր կերպով տպւնդրեցնելու նրանց յիշողութեան մէջ պատմական անձերի, քաղաքների, շէնքերի, անցքերի, ճակատամարտերի պատկերները: Ոչ չէ տեսել եւրոպական այն գեղեցիկ հրատարակութիւնները, որոնք մանուկների համար հրատարակված լինելով, պարունակում են իրանց մէջ, ծեփատի հետ միասին և պատմական այլ և այլ պատկերներ: Բայց մի և նոյն ժամանակ պատմական շէնքերի տեսարանները ունեն և մի ուրիշ, մանկավարժական, զարգացուցիչ օգուտ. նրանք ընտելացնում են աշակերտին գեղարուեստի նուրբ կանոններին, ծանօթացնելով նրան այլ և այլ ազգերի և իր հայրենիքի անցեալ դարերի ճարտարապետութեան հրաշալի արձանների հետ:

Մեր երկրի հայոց դպրոցների մէջ մենք այդ կրթիչ, մանկավարժական միջոցների գործադրութեանը չենք պատահում: Միայն եւրոպայում դռնվող մի հայոց դպրոցում, այն է Վենցիայի Բաֆայէեան դպրոցում, մենք ամեն դահլիճների պատերը զարդարւած տեսնել հին հայոց պատմական անձինքների, տեսարանների և արձանների պատկերներով: Այդ պատկերները ծառայում են մի կողմից, որպէս օժանդակիչ միջոցներ պատմութեան դասի ժամանակ, իսկ միւս կողմից աշակերտները արտանկարելով նրանց, վարժվում և ընտելանում են ճարտարապետական գեղեցիկ ոճի, գեղարուեստական կանոնների մէջ:

Գանի ժամանակ է որ պ. Քիւրճեանի ֆոտոգրաֆիական ժողովածուն, Անիի աւերակների, հրատարակված է, բայց մեր դպրոցներից շատ քիչերը, այն է երկու երեքը, հարկաւոր համարած են զննել այդ ժողովածուն: Իսկ մեր դպրոցների մեծ մասը զեւ և չեն հասկացած պատմական պատկերների ժողովածուի մանկավարժական մեծ նշանակութիւնը:

Եւ ինչ որ նշանաւորն է, այն սակաւթիւ անձինք, որոնք ըմբռնած են ժողովածուի այդ մեր նկարազարդւած և ընդհանուր մանկավարժութեան ճանաչված նշանակութիւնը, դրանք դպրոցների տեսուչներ կամ հոգաբարձուներ չեն, այլ մի երկու վարժապետներ, այն էլ զաւառական, և մի քանի դպրոցների մէջ իրանք աշակերտները:

Մենք այս օրերս առիթ ունեցանք կարգաւ երկու նամակներ, որոնք ուղարկվեցան պ. Քիւրճեանին Շուշու հայոց դպրոցից, մինը Վազարոս Աղայեանց ուղղակի, իսկ միւսը նոյն դպրոցի տան և չորս աշակերտներին: Այդ երկու նամակների մէջ մեզ զբաւեց զինուորական ոչ թէ նրանց մէջ արտայայտած ջերմ համակրական զգացմունքը զեպի արհեստագէտը, այլ այն որ վերջապէս մի քանի անձինք հայերից բաղկում են հասկանալ թէ որքան մեծ նշանակութիւն կարող է ունենալ մի պատմական ժողովածու, ինչպէս Քիւրճեանի ժողովածուն է, դպրոցներում թէ պատմական դասերի ժամանակ աշակերտների մէջ գիտակցական և որոշ գաղափարներ մտցնելու անցած դարերի մասին, և թէ նրանց ընտելացնելու ճարտարապետական գեղեցիկութիւններին և զարգացնելու նրանց մէջ գեղարուեստական ճաշակը:

Ցանկալի է, ի հարկէ, որ և մեր միւս դպրոցները հասկանային այդ տեսակ ժողովածուի և առհասարակ պատմական պատկերների կարեւորութիւնը նոր սերունդի կրթութեան համար:

Գ. Ա.

ՆԱՄԱԿ ՇԱՄԱԽԻՆ

Փետրվարի 5-ին

Մեր ազգի շահերը պահանջում են, որ ամեն մի բանիմաց անհատ, որ կրում է իր վրա հայ անունը և որի երակներին մէջ հոտում է հայ արիւնը, աշխատի ազգի կրօնական համոզմունքի պատճառով իրարից անջատված մասերը իրար մօտեցնելու, ատեղութիւնը և նախանձը նրանց միջից վերացնելու ու կրկին եղբայրական սէրը վերականգնելու, այն հետեւելու, որ աշխատանքային մոտեցումը անցնելու և իրանց ազգի հարգաւոր անդամ ճանաչելով, ձեռք ձեռքի տուած եղբայրական սիրով աշխատելին առանց կրօնական խտրութեան առհասարակ ազգի պիտոյններն հոգալու: Սրա համար հարկաւոր էր զգուշութեամբ և իմաստութեամբ գործելու, որ մի գուցէ որ և իցէ ձեռնարկութիւն կամ վարմունք այլադասան հայերին լուսաւորչականներին մօտեցնելու փորձաքնն աւելի չը հնազանդէին և չը խորթացնէին նրանցից, որ խիստ վնասակար է ազգի շահերին:

Կան մարդիկ և կան ընկերութիւններ, որ չեն հետեւում այդ քաղաքականութեանը: Նրանց համար հոգ չէ, կուղեւայ ամենին հնաւանդին և կարգին ազգի անդամութեանը այն բազմաթիւ այլադասան հայերը, որ գոչում և աղաղակում են դէպի ազգի մեծամասնութիւնը, թէ մենք ազգով և լեզուով հայեր ենք, ուրեմն ձեռք արեւանակից եղբայրները և մի և նոյն ազգի անդամներ, միայն թէ իրարից տարբեր կրօնական համոզմունք ունենան:

Շատ զգալի է այն տխուր երեւոյթը, երբ լուսն ենք, որ Թիֆլիսի և Մոսկուայի հայոց բարեգործական ընկերութիւնները իրանց սահմանադրութեան մէջ խտրութիւն են դրել այլադասան հայերի և լուսաւորչականների մէջ, որով և ցոյց են տուել, թէ նրանք այլադասան հայերին չեն ճանաչում ազգի հարգաւոր անդամներ և հետեւալով թէ նրանց ընկերութեան մէջ ընդգրկելու և թէ ուրիշ կողմից նրանց պիտոյնների համար հոգալու և աւելորդ է: Բայց այդ ընկերութիւնները թող հաստատ հաւատացած լինեն, որ երբ այլադասան հայերը հոգեւոր պիտոյնների համար իրանք իրանց բաւականութիւն են տալիս, նրանց ինքնապիտոյնութիւնը և չը պիտի թող տար և նիւթական կա-

րիքի համար մի լուսաւորչական ընկերութեան ծանրութիւն պատճառելու, քանի որ եղբայրական կատարեալ սէրը չէր ծառայած այդ երկուսի մէջ: Փաստերը հեռու չեն: Բայց Սարգսի Մարգարիտիան ընկերութիւնը ունի ազատ կանոնադրութիւն, ուրեմն նրա գոնեւոր բաց են ամեն մի այլադասան հայի համար: Հարցը, ինչո՞ւ, ահա քոտն ու երկու տարի է, որ Շամախում գոյացել է մի հայ աւետարանական եկեղեցի, Բագու էլ ընտելվում են շատ աւետարանական հայ գերդաստաններ, ինչպէս Մարգարիտիան ընկերութիւնը որ աւետարանական հայի դասի մինչ օրս իր հաշուով դաստիարակել տուաւ և որ աղքատ աւետարանական հայ նրան նիւթական ծանրութիւն պատճառեց: Երբ որ ևս հաստատ գիտեմ, որ իմ բարեկամ կամ ծանօթն չէ դաւա իմ ինչո՞ւ, բայց մի և նոյն ժամանակ իմ նրան չը հրաւիրելով վերադառնալու և նրա ինքնապիտոյնութիւնը և նրա նով խղճու և բարեկամական կապը, այն ժամանակ քաղաքավարութիւնը պահանջում է, որ գոնէ մի լոկ հրաւիրու է և չանմ իմ բարեկամիս: Այդպէս էլ հարկաւոր էր, այդ ընկերութիւնները իրանց կանոնադրութիւնների մէջ գոնէ մի լոկ յօդուածով էլ և չանէին իրանց այլադասան արեւմտիկ եղբայրների սիրտը, գուցէ դրանց պատուելի հիմնադիրները իրանց օրերով չէին տեսնելու անդամ մի այլադասան հայ նրանց ծանրութիւն տուած: Հայ աւետարանականները ճանաչելով իրանց հոգեւոր պարտականութիւնները, անուշադիր չեն մնում և իրանց զաւակները դաստիարակելու մէջ: Նրանք իրանց ուսուցիչ, իմուցիչ, հագնելից կարող են միայն թէ իրանց զաւակներին, թէ տղայ, թէ աղջիկ, կրթութիւն տան: Հասարակ կրթութիւնը սրանց մէջ պարտաւորացուցիչ է, իրանց աղքատներն էլ առանց ինքնապիտոյնութեան չեն մնում: Ուրեմն ինչպէս ընկերութիւններին չէր հարկաւոր վախճալ այդպիսիները, թէ նրանք կարող էին իրանց նիւթական ծանրութիւն պատճառել: Հայ-կաթոլիկներին և չը ճանաչելով, չնմ կարող նրանց մասին խօսել:

Գանն և երկու տարի է իւրաքանչիւր կիրակի շաբաթան Շամախու աւետարանական քիչուոր հայեր իրանց աղքատ քսակից որով, աղքատի և տնտեսի համար բաժին հանելով մինչ օրս հաղթներ են ժողովել և օգնութիւն տուել ամեն մի կարօտեալի առանց կրօնի խտրութեան: Որ աղքատ ճանապարհորդ հայ, ուսու, թուրք, ասորի, կարօտութիւն ունենալով ձեռն է մեկնել և օգնութիւն չէ ստացել և որ աղքատ գերդաստան Շամախում գիմել է այդ ընկերութեան և դատարի ձեռքով է վերադարձել: Ուրեմն Շամախու հայ աւետարանական ընկերութիւնը այդքան ժամանակ կատարել է և կատարում է մի մարդասիրական ընկերութեան պաշտօն, իր գուծը չը վաղկելով ամեն մի այլադասան կարօտեալ անձի սուջն, առանց ունենալու որ և իցէ մի կանոնադրութիւն, բայց միայն զնկարկովով խղճի ազատ ցուցմունքով: Բնութով և, որ այդ ընկերութիւնը միշտ պիտի շարունակէ իր գործունէութիւնը, թէկուզ հարուած հայ լուսաւորչական ընկերութիւնները և աղաները իրանց գոթի էլ փակէին նրա առջև: Բայց այլադասան հայերը թող չը մոռանան և սա, որ մեր ազգը չէ գոյանում միայն այդ երկու ընկերութիւններից, այլ կան նրա մէջ մարդիկ, որոնք արդարն դժնաւորում են ազգի միութիւնը:

Մի քանի խօսք այլադասան հայերին: Ամեն մի քաղաքի կամ տնաձոր սուրբ պարտականութիւն է իր ժողովրդի ազգի մասի կամ գաւառի թիւը գաղափարները ուղղելու, երբ նրանք կրօնք և ազգութիւնը իրարից չեն կարողանում ջոկել, այնպէս որ աւետարանական հայը կարծում է, թէ ինքն նման է, իսկ կաթոլիկ հայը ֆրանկ: Թէ որ մի այդպիսի ծուռ գաղափար գտնվում է մի ժողովրդի մէջ, պատիւ չէ բերում նրա քաղաքին, իսկ եթէ կայ մի գերդաստանի մէջ, մեծ ամօթ է նրա տնաձոր, որ նա իր գաւառներին ուղղու-

թիւն չէ տալիս և չէ հատկացնում, որ հայերը հաշիւ են, հայ ազգի գաւառներ և հայ պիտի մնան մինչև գերեզման, ինչ և լինի սրա կամ նրա կրօնական համոզմունքը:

Լ. Փիլոսոփա

ՆԱՄԱԿ ՍՂՆԱԽԻՆ

Փետրվարի 8-ին

Յունվարի 31-ին տեղիս վրաց թատրոնաւերների խումբը քաղաքային ուսումնարանի դահլիճում ներկայացրեց երկու վոզովիներ վրացերէն լեզուով: Խաղամիջոցներին երբում էին նոյն ուսումնարանի աշակերտները: Խաղը վերջացաւ պարով: Պէտք է ասել որ ներկայացումն բաւականաչափ լաւ անցաւ, բայց համեմատելով անցեալ տարվայ հայերէն ներկայացումների հետ, թող էր Այս բանը զգային և այն հանդիսականները, որոնք ներկայ էին և հայերէն ներկայացումներին և ինչո՞ւ, հայոց ուսումնարանի ուսուցիչներին, որոնց չնորհիւ արվեցան ներկայացումներ, որ դարձեալ տան հայերէն ներկայացումներ: Ուսուցիչները մեծ ուրախութեամբ յանձն կառնէին այս, եթէ ունենային գոնէ մի դերասանուհի, բայց այստեղի հայերը դու ևս նախապաշարված դրութեան մէջ գտնվելով իրաւունք չեն տալիս իրանց կանանց և աղջիկներին բնւո դուրս գալու, որովհետեւ, սրանց կարծիքով, մեծ ամօթ էր լինի նրա համար ով որ բնւ կը դուրս գայ: Թող գոնէ այժմ հայ կանայք և օրիորդները օրինակ առնէին վրացի կանանցից և օրիորդներից, որոնք զգալով թատրոնի օգտաւորութիւնը համաձայնվեցան բնւ դուրս գալու: Հնորձակայութեան արժանի են իշխանուհի Զանդիկը, տ. Աբելիսի և այլ վրացի կանայք և օրիորդներ, որոնք մասնակցեցին ներկայացմանը: Անցեալ տարի հայ դերասանները մի դերասանուհի ունէին, բայց տեղացի անհասկացողները այնքան անէծքներ և բառաւարտներ թափեցին նրա դիմին, որ վերջապէս այն դերասանուհին էլ հեռացաւ: Բաւական չէր այդ, այդ ներկայացումներին շատերը չէին էլ յաճախում անուանելով թատրոնը մասնաբաժնի, այն ինչ վրացերէն ներկայացմանը մեծ բաղձնութիւն կար, որոնց մեծ մասը վրացերէն էին: Մինչև անգամ գիւղացիները իմանալով ներկայացումն անուանը յաճախել չը զրգան, այնպէս որ այն ներկայացումից գոյացաւ 300 ռ., իսկ հայերէն իւրաքանչիւր ներկայացումից միջին թւով մուտքը գոյանում էր 40 ռ., որը հաղկ ծախսը ծածկում էր:

Վերջացնում եմ նամակս ինչո՞ւ, այն երկուստարդներին, որոնք անցեալ տարի մասնակցում էին հայերէն ներկայացումներին, կրկին միանան միմեանց հետ և սկսեն տալ ներկայացումներ, իսկ տեղացիներից կը խնդրէին, որ դուրս գան նախապաշարված դրութիւնից և իրաւունք տան իրանց կանանց և աղջիկներին բնւ դուրս գալու: Թող հասկանան վերջապէս, որ ամօթ չէ բնւ դուրս գալը, այլ ընդհակառակն մեծ պատիւ կը բերի այն կնոջ և օրիորդին, որը իր կարողութեան չափ կօշիկ բռնակալ արեւմտի ծաղկմանը: Կը խնդրէին նոյնպէս տեղացի հայերից, որ յաճախէին ներկայացումներին, իմանալով որ տոմսակին տուած փողերը կորած չեն, այլ դրանից թէ իրանք և թէ տեղիս հայ չքաւոր աշակերտները օգուտ կը քաղէին:

Մ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 14 փետրվարի

Անցեալ տարի, կարծես բարեգործական ընկերութեան հիմնաւոր ժամանակ, «Մշակը» մտաբերելով մեզ չքաւոր աշակերտներին, առաջարկել էր բաց անել Թիֆլիսում ապրող չքաւոր աշակերտների համար մի ճաշարան, որ աշակերտները կարողանային իրանց շրջանում մնալով, մի

հոգեւորական մէջ կատարեալ հանգստութիւն է տրուած և զօրքերը տեղացիներէ հետ հաշտ են ապրում: Թէպէտ Փրանսիական զինե-րաւորները չեն փոքրացրել նախագիշական միջոցները:

ԲՈՒՆԱՐԱՐԱՆ

Սօֆիայից «Polit. Corresp.» լրագրին գրում են փետրվարի 10-ից, որ Բ. Կրան և Բօլզարիայի զինվածախառն յարաբերու-թիւնները շուտով կը վերականգնվեն: Բօլ-զարական զինվածախառն զործակաւար Բալթիկայի մէջ կը փոխարինէ Զանով, որ շուտով կուղևորվի իր պաշտօնը ընդունելու համար: Հէնց որ Բօլզարական զործակաւարը կը հասնի Կ. Պօլսի, Թիւրքաց կառավարութեան ներկայացուցիչ Նե-հադ-փաշա կուղևորվի Սօֆիա: Այստեղի քաղաքական շրջաններէ մէջ լուր է տա-րածված, որ Բօլզարական ժողովրդական լուսաւորութեան միւնիստը Խրեշէկ շուտով հրաժարական կը տայ: Նրա գլուխները այնքան վատացել է, որ վերջին ժամանակ-ներում պետական խորհրդի նախագահի ներկայութեամբ եղած միւնիստներէ խոր-հրդին մասնակցելու համար նա հրաւեր չէ ստացել:

Ֆիլիսթիֆայից «Բեյութեր» ընկերութեանը հաղորդում են, որ Ալեկո-փաշա առաջարկեց արեւելեան-բուլղարական մասնաժողովին երկու Փրանսիացի ֆինանսագետ անգամ-ներ ընդունել, բայց մասնաժողովը մերժեց այդ առաջարկութիւնը: Ալեկո-փաշա մտա-ղիւ է Թիւրքաց կառավարութեան միջնորդ-ութեամբ յայտնել եւրոպական պետու-թիւններին, որ ստիպված է հրաժարվել Արեւելեան-բուլղարական կառավարելուց, որով-հետեւ բուլղարական մասնաժողովի և իր մէջ անհամաձայնութիւն է տրուած:

ԱՌՍՏՐՈՒՆԳԱՐԱՆ

Աւստրո-ունգարական լայնատառի փետր-վարի 11-ի նիստին, կառավարութեանը առաջարկած հարցին պատասխանելով, կոմ-ճապիէ ասեց, որ անցեալ տարի Պրագայի մէջ եղած անկարգութիւններէն մասնակցող-ները ենթարկված են պոլիցիական և քրէա-կան պատասխանատուութեան: Այժմ կար-գապահութիւնը և հանգստութիւնը վերա-կանգնված են և կառավարութիւնը հար-կաւոր չէ համարում զինվ. արտաքին կար-գի միջոցները: Այժմ անսպասելի կերպով որ և է անկարգութիւն կը պատահի, կառա-վարութիւնը մեղաւորներէ հետ խտու-թեամբ կը վարվի: Նոյն նիստի ժամանակ պատգամաւոր Ֆրեյդման մի ճառ արտասա-նեց բնակիչներին լրագրական բամբասանք-ներէ դէմ պաշտպանելու մասին: Ճառասոսը մասնացոյց արաւ այն հանգամանքի վրա, որ Փրանսիական օրէնքները այդ գործի մէջ մեծ պաշտպանութիւն են ցոյց տալիս բնա-կիչներին: Աւստրիական հպատակներէ նշա-նաւոր մեծամասնութիւնը միջոց չունի զրա-կանապէս հերքել լրագրական բամբասանք-ները: Գիտեալ է մի օրինակ որ մարդ զանի, որ վիրաւորված չը լինի որ և է լրագրից և ամենքն ուրախանում են, որ միայն իրանք չեն անպատկառ: Այդպիսով ազգայնականու-թեան մէջ թշնամական զգացմունք է տա-րածվել: Այդ պատճառով կառավարութիւնը մի և նոյն է ազատամիտ, կղերական, պահպա-նողական, թէ աւատական բնականաբար ազգաբնակչութեան տոնելութեան առարկայ է դառնում: Ժողովուրդը ուրախանում է, երբ մամուլը պախարակում է կառավարու-

թեանը: Այդ պատահել է Աուերպիլիսի միւնիստութեան հետ, նոյնը կը պատահի և միւս կառավարութիւններէ հետ: Այն ժամանակից, ինչ Աւստրիայի մէջ զոյու-թիւն ունի այժմեան ընկալաբեղական ձեւը, ամենալաւ պաշտպանները թողել են փա-տաբանական տապալեցը: Բայց առաջը պատ-գամաւոր Կոպպի պատասխանը բերուց յի-տոյ 151 ձայներէ մեծամասնութեամբ 51-ի դէմ վճռեց Ֆրեյդմանի առաջարկութիւնը յանձնել մի մասնաժողովի:

ՉԵՐՆՈՂՈՐԻՆ

«Polit. Corresp.» լրագրին գրում են փետրվարի 6-ից Մոսկուից: Այն ժամանա-կից, ինչ Չերնոգորիան Կարմալայի և Հեր-ցեգովինայի ուղղութեամբ իր սահմաններէ վրա պահպան զօրքեր է պահում և նրանց վարձարութիւն է տալիս, այդ զօրքերը կանոնաւորապէս պահպանում են սահման-ները: Չը նայելով որ զինուորները չափա-զանց համակրում են իրանց հերցեգովինայի եղբայրներին, այնու ամենայնիւ նրանք բա-րեկողմութեամբ են ծառայում և չեն թող տալիս չերնոգորցի կամաւորներին անց-նել սահմանը առանց օրինաւոր անցագի-թի: Սահմանների պահպան զօրքերը եօթ-բաժիններ են կազմում և իւրաքանչիւր բա-ժինը ունի իր առանձին հրամանատարը: Իւրաքանչիւր զօրքաբաժին ունի մի զրադիւր, որ ամեն օր զեկուցում է ներկայացնում չերնոգորիական կառավարութեանը պահա-պանների արած հակողութեան մասին: Կա-ռավարութիւնը սահմանները պահպանող զօրքերին տուել է հետեւեալ հրահանգները: «Առանց օրինաւոր անցագրի չը պէտք է թողնել Չերնոգորիա հերցեգովինայից: Բուն չերնոգորցիներին միայն այն ժամանակ կարելի է թողնել չերցեգովինա և Կալմա-րիա, երբ նրանք կանոնաւոր անցագրիներ կուենան: Չերնոգորիական վարչութեանը խտուութեամբ արգելվում է անցագրիներ տալ անյուսպի անձանց: Անցագրիները արը-վում են միայն կառավարութեանց ցեղանիքի մէջ: Ապտամբ հերցեգովինայիցիներէ հետ համաձայնութեան կայացնելը, նրանց կա-մաւորներ կամ ռազմավարներ հասցնելը հաւանվում է քրէական դատարանով: Բո-լոր հրամանատարներին այդպիսի հրահանգ-ներ են ուղարկված և նրանցից մէկը այդ հրահանգները չը կատարելու համար բան-տարկված է: Առհասարակ պահպան զօր-քերը լաւ են զործում, բայց տարաբաղա-ւոր նրանք թուով քիչ են և զրա պատճառ-չերնոգորիական զանձարանի աղքատութիւնն է: Լաւ կը լինի, որ պահպան զօրքերի թիւը մեծացնվի, երբ աւստրո-ունգարական զօրքերը կը սկսեն պատերազմական զործ-րութիւններ սպասամբ հերցեգովինայիցիներէ դէմ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Моск. Телеграф» լրագրում կարդում ենք: Խաղաճանի «Ֆելիքս» պարական լրագրի վեր-ջին համարում մէկ լուր է տրված, որ պարսից շահի աւագ որդին, իշխան Ջէլա-Սուլէյման, հայոց ազգիւն իր առանձին շնորհ ցոյց տալու համար, Չուֆալի հայ թեմական արքեպի-սկոպոսին հրամայեց իր հաշուով հայ և լէւոն լրագրի հրատարակել, որի նպատակը լինի կրթութիւն և լուսաւորութիւն տարածել պարսկական հայերի մէջ: Այդ լուրին վերաբերել պարսկական լրագրի-լի կողմից անկայնութիւն է, որ պարսկական հայե-րը այդ շնորհով պարտական են տրվել Մսե-րիանցի խմբագրութեամբ Մոսկուից հրատարակ-վող «Փարս» շաբաթականի հայերէն պատկերազարդ ամսագրին:

—«Daily News» լրագրի թղթակիցը վարչա-կայի մէջ պատահած անկարգութիւնների մասին խօսելով, նկարագրում է այդ անցքի պատճառ-նրկական վեար և իսկա խօսքերով ցոյց է տալիս տեղական իշխանութեան անպարտականութիւնը: Թղթակիցը վերջացնում է իր նամակը ցոյց տալով օտար պետութիւնների Ռուսաստանի ներքին գործերի մէջ խառնելու վեար: Նրա կար-ծիքով և վարչակայի այն հրահանգի կարծի-քով, որոնց հետ նա խօսել էր, ներկայ գործերի դրոյթի մասին ամենալաւ վարձանը հրահանգի մեծ չափերով զարթանաութիւնը կը լինի:

—«Times» լրագրին յունիսրի 31-ից Կ. Պօլսից հաղորդում են, որ Նովիկով ինքնուր օտոմա-նեան բանկի գլխավոր ֆորստէրին յետաձգել իր ուղևորութիւնը, որովհետեւ օրերումս դատաւորու-թիւն կայ համաձայնութիւն կայացնել այդ հիմնա-րարութեանը, որոնք նշանակված են Ռուսաս-տանին պատերազմական ծախս վճարելու համար: Նրեկ ուսուց զեպանը Ալիմ և Սաիլ փաշա-ների հետ տեսակցութիւն ունել, որտեղ նա խոստովեց պահանջում էր, որ պատերազմական ծախս ինքզին շուտով լուծումն ան: Թիւրքաց միւնիստները պատասխանեցին, որ սուլթանը մի քանի օրից յետոյ կը պատասխանի:

—Պրանսիական լրագրիները հաղորդում են: Լուր է տարածվել, թէ Բուստան նշանակվում է Ալեքսանդր Մուրի տեղ իսկ վերջինը նշանակվում է վաշինգտոնում: Բուստանի յաջորդի վերաբերու-թեամբ հոգեւորական Գիւ և ոչինչ յայտնի չէ-ատում են, որ Փրանսիական զինեղաւորից մէկը կուղարկվի այնտեղ: Պրանսիական կառավարու-թիւնը ամ ևս նշանակել Բուստանի տեղ, հոգեւոր-բնակիչները հիացմունքով կընդունեն նրան, միայն թէ ընդհանուր հիւպատոս օրինաւոր մարդ լինի, որը վերջ կը դիւ այն անաւորով զգացմունքին, որ արդարայն թէ անարար, բարձրացնում է Բուստանի անունը: Ինչ և ինչ Ֆրեյսիսի մի-նիստութեանը կարելի է հնորհաւորել, որ նա վճռեց յետ կանգնել Բուստանին հոգեւոր, որով-հետեւ նա Պրանսիայի ամենախառնակ թշնամին էր այդ նախնաւոր: Նրա հեռանալուց յետոյ հոգեւոր բնակիչների Պրանսիայի դէմ ունեցած անարտակաւութեան և գրգռման զլուստը պատ-ճառը կանխաւանդ և կրկին կը սկսվեն բարե-կամական յարաբերութիւնները:

—Լրագրիներին փարիզից, փետրվարի 14-ից հաղորդում են, որ պ. Լալուր Լոնդոն գնաց:

—«Presse» լրագրին Բելքիցի փետրվարի 1-ից հաղորդում են, որ Բելքիսի Փրանսիական նոր զեպանը, բարձր Կուսել, այսօր ներկայացաւ Վիլհելմ կայսրին: Տեսակցութիւնը մէկ առանձին հետեւեց չուեցաւ: Խօսակցութիւնը վերաբեր-վում էր երկու պետութիւնների բարեկամական և խաղաղ յարաբերութիւններին, մի և նոյն ժամա-նակ կայսրը իր առանձին ուրախութիւնը յայտ-նեց այն պատճառով, որ նոր զեպանը իր ու-սումը և զիպովը դրամական համալսարանումն է տալիս և այդ պատճառով կարող է ճիշդ գա-ղափար կազմել գերմանական գործերի մասին: Բարձր Կուսել կայսրուհուն ևս ներկայացաւ:

—Բելքիսի «Germania» լրագրի հետաքրքրի մանրամասնութիւններ հրատարակեց այն բանի մասին, թէ ինչ գրութեան մէջ են Ֆինանսական գործերը Բաղնուս: Բաղնուս մեծ դրամական ֆի-նանսների միւնիստը նորերումս պատգամաւորնե-րի ժողովում խոստովանեց, որ ահա տալ տա-րի է արդիւն, որ զանձարանը նշանաւոր դէֆիցիտ անի: Մինչև այժմ բոլոր անհրաժեշտ ծախսերը անսպասելի եկամուտներով էին ծածկվում: Այժմ այդ անսպասելի արդիւնները չեն բաւականանում: Գործերի դրութիւնը այլ ևս անհաւան էր ծած-կել: միւնիստը ստիպված էր ամբողջապէս ճշմար-տութիւնը յայտնել պատգամաւորների ժողովին:

—Նիւ-Եորկից անգլիական լրագրիներին հա-ղորդում են, որ յօդու իրանաբացիներն ահապէս դուստրներ են հաւաքված Ամերիկայում: Առում են, որ երկու տարեկ մէջ մինչև 2 1/2 միլիոն զուլար է հաւաքված:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Սուլթան Աբդուլ-Համիդ Երրջ, զեղեցիկահի Նա-լի մահը վերագրում են հետեւեալ տխուր անցքին, որը անհաւատալի կարող է երևալ նրանց համար, որոնք լաւ ծանօթ են թիւրքաց կանանց կեանքի հետ հարեւում: Սուլթանուհի Նալի սիրում էր Սա-

փիլ-թէյ անունով մէկ երիտասարդի: Ոչինչ այնքան հեշտ չէ թիւրք կանանց և մանաւանդ բարձր դասի կանանց համար տեսնել մէկ օտար արքայադու-հետ: Այդ տիկինները կարող են դուրս գալ, երբ կամենում են, նրանք յաճախ դնում են կառքով զբոսնելու, զետեղել և առաւելներ արկիւր վրա և ապա անուն են վերագրում: Նրեկ այդ զրո-տանքները մէկի ժամանակ իշխանուհին նկատեց Սափիլ-թէյի սիրահարական հայեաղքները և նրա անունը խնամալով, զրաւիցաւ նրանով: 6 կամ 7 տարեկ յետոյ Նալի պատկերեալ զեղեցիկ վրա-ցի օֆիցեր Մահմէդ-թէյի հետ: Սափիլ-թէյ տեղե-կանալով այդ ամուսնութեան մասին, անձնաս-պանութիւն գործեց: Անձնասպանութիւնը թիւր-քերի մէջ շատ հազիւ է պատահում: հասարա-կութիւնը ապշած էր երիտասարդ մարդու այդ վարմունքից և չէր կարողանում պատճառները գուշակել: Հաւատացնում են, որ սիրահարված տղամարդը մահից առաջ նամակ գրեց իշխանու-հուն, իսկ ուրիշները պնդում են, որ նրանք վա-րուց զրապրութիւն ունէին միմեանց հետ: Ինչ և ինչ Նալիլի վրա սատակի ներգործութիւն ունե-ցաւ այդ անցքը, նա առհասարակ թույլ կազ-մուածք ունէր: Նալիլն մէկ տեսակ հիւանդու-թիւն ստացաւ, որը նրան գերեզման տարաւ: Սուլթանը ոչինչ չը գիտէր այդ սիրոյ մասին, եթէ չէ, իր քրոջը, որին շատ սիրում էր, կա-մանայնէր նրա սիրած մարդու հետ: Շատ կա-րելի է, ինքն իշխանուհին չէր կարծում, թէ որ-քան սիրված էր ինքն և որքան թանկ էր նրան Սափիլ-թէյ, մինչև որ մահը չը լայցեց նրա աչքե-րը: Սուլթանը տատկից ցուում է իր քրոջ վրա, այդ կորուստից յետոյ նա շուտ շուտ մեղամո-ծոտութեան մէջ է ընկնում, որի ժամանակ ո-չինչ և ոչ զք է կարող նրան ապախայնել:

«ՄԵԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆՅՈՒՆ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 15 փետրվարի: «Новое Время» լրագրը հաղորդում է, զինուորա-կան ակադեմիաների վերակազմութիւնը յե-տաձգված է անորոշ ժամանակներով: «Пра-вда. Вѣстн.» լրագրը հաղորդում է, Մեծ Խելանուհի Մարիա Պաւլովնայի առողջու-թիւնը լաւանում է: Վտանգ այլ ևս չը կայ, բիւլետենները զաղարեցրած են: «Голосъ» լրագրը հաղորդում է, փետրվարի 14-ին կայացաւ երեք միւնիստների և էկապրանե-րի ընդհանուր նիստ, քննվում էր խմբիչնե-րի նախագիծը, որ մեծ մասամբ փոփոխված էր միւնիստներից: Նախագիծը վերջնակա-նապէս խմբագրված է Պետական Խորհր-դին ներկայացնելու համար: «Новости» լրագրը հաղորդում է, Աւստրիացիներ ընդհանուր յարձակումը ապստամբներէ կենտրոնական գիւղերի վրա Չադորի մօտ կա-տարելապէս չաջողվեցին: Մի քանի տեղե-րում ապստամբները այնպէս էին ընդդիմա-նում, որ աւստրիացիները կոտորելի բոլոր բնակիչներին: Աւստրիացիները բերել են տուել շների խումբեր ապստամբներին ծած-կված տեղերից հանելու համար: Հեռագիր-ները Օդեսայից հաղորդում են, որ զինուո-րական կուբում իշխան Գոնդուկով-Կորսա-կովի համար հրաժեշտի ծառ տուել: Գու-րկո ընդունեց տեղական մամուլի ներկայա-ցուցիչներին և յայտնեց, որ չի արգելի մերկայնել զեղծումները:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 փետրվարի: Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 95 ռ. 25 կ., երկրորդ 91 ռ. 12 կ., երրորդ 91 ռ. 50 կ., չորրորդ 91 ռ. 12 կ., հինգե-րորդ 90 ռ. 25 կ., ներքին 5% տոմսակը փոխառութեան տոմսակը արժէ 218 ռ., երկրորդ 217 ռ. 25 կ., արեւելեան առաջին փոխառութեան տոմսակը արժէ 90 ռ., երկ-րորդ 90 ռ., երրորդ 90 ռ. 12 կ., ոսկի 8 ռ. 13 կ.: Ռուսաւ 1 ռուբլ Լոնդոնի վրա արժէ 24,21 պէս, առաջ 100 ռ. Համ-բուրգի վրա արժէ 206 մարկ 75 պֆ., ֆա-րիզի վրա 254 ֆրանկ 75 սանտիմ: Բօր-այի արամագրութիւնը շատ ամուր է:

Խմբագիր—հրատարակող ԳԻՒԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

БИБЛИОТЕКА И КАБИНЕТЪ

ДЛЯ ЧТЕНІЯ

При библиотекѣ (гал. Арцруни № 149 и 150) гдѣ была «Центральная Книжная Торговля», съ 10-го января открытъ кабинетъ для чтенія, въ которомъ получаютъ болѣе 60 періодическихъ изданій мѣс. столич. и иностранныхъ. (Франц. и нем.). Библиотека значительно наполнена и пополняется новыми книгами. Приняты всѣ мѣры къ удовлетворенію г. г. подписчиковъ и читающей публики въ кабинетѣ.

2—3

ԾԱԽՎՈՒՄ ԵՆ 25% ԷԺԱՆ

քան թէ ուրիշ տեղ. Թէ՛՛, կախաօ, ՇՈՒՈԼԱԿ, բիսկվիաներ, մուրաբաներ, բրինձ, ամաններ, բաժաններ, բոկաններ, թէյ, յամաններ, սուրճներ, ՄԱՏՈՒՑԱՐԱՆՆԵՐ, զգեստապաններ, կոճկաբերներ, զգեստապաններ, գլխարկներ, գլխարկներ, գլխարկներ, թուղթ, ծրարներ, տետրակներ, մատիտներ, չրա-ՑԱՆՆԵՐ, ԲԷՎՈԼԱՆԵՐՆԵՐ, մեջքակապներ, կլեման, ԹԱՄԲԵՐ, անձեր, ութներ, ՄԱՀ-ՃԱՍԱՆՆԵՐ, երեքբլաններ, թաշկինակներ, կանանց գուլթաններ, մարգկերանց գուլթաններ, առաջնորդ սպան, հոտաւէտ ջրեր, շերտա-ցիտան մագնիզիա, խնայի գինի, պորտ-վէյն, խերես, կոնիակ և 1,000 այլ առարկաներ: ԱՆԳԼԻՍԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԵՋ: ՆՈՅՆ ՏԵՂԸ փաճառականներ: ԲԻՆ ՄԵԾ քանակութեամբ ծախվում է ԹԵ՛՛՛. պուզերով 40, 46, 52, 58, ր., իսկ ֆուտաերով 1 ր. 1 ր. 10 ր., 1 ր. 20 ր., 1 ր. 40 ր., 1 ր. 60 ր. և 1 ր. 80 ր., իսկ ամենաբարձր թէյը ֆուտաեր 2 ր. քաշը ԱՌԱՆՑ ԹԱԹԻ:

ՀՐԱՑԱՆՆԵՐ 20—60 ր. և 204-ԲՈՐ (chokl bore) George Dau-ի գործարանից 120 ր., ԲԷՎՈԼԱՆԵՐ 4—34 ր., ԲՈՒԼ-ԳՕԳ (bull dog) 11—20 ր., կանանց թամբեր 65 ր., շեֆիլդի դանակներ 3 ր. 50 ր. գլխարկներ, ալբոմներ կիսագնով, ֆիլտրա-ներ և այլն: Ամենամեծ պահեստ հրացան-ների և ԲԷՎՈԼԱՆԵՐԻ ԹԵ՛՛՛ 98—100

ԱՐԳԵՆ ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

Ռուսաց յայտնի գրող ՎՈՒՉԵՏԻՉԻ «ДВѢ ЕЛКИ» մանկական գրքերի հայերէն թարգմանութիւնը «ԵՐԿՈՒ ՏՕՆԱԾԱՌ» անունով:

Այս գրքիցը ընդունել էր տպագրելու Հայ երէն գրքերի հրատարակու-թեան ընկերութիւնը: Բայց իրա-նից անկախ պատճառներով ինքն ընկերու-թիւնը յաճողութիւն չունեցաւ տպագրելու: Տպագրված է Հայ երէն տարի թղթի վերայ խոշոր տարեկանով:

Գինն է 20 կոպէս:

Կարելի է ստանալ ԹԵ՛՛ կէն ԵՐՕՆԱ-կան գրադատանոցից և ԹԵ՛՛ թարգմա-նողից՝ հետեւեալ հասցեով:

Тифлис—на Авлабартъ Ивану Петровичу Назарянцъ.

ՎԱՃԱՌՈՒՄՆ ՄԻՆՁԵԻ ԶԱՏԻԿ

զլխարկներ 1 ր., ֆուֆայկաներ 2 ր. 75 ր., բրեւներ 4 ր., բիշակներ 8 ր. ամբողջ հագուստ 13—19 ր., զրապ, մա-հուգ, արիփ, արիւններ և ալբոմներ կէս գնով: Հնդկական բրինձ 6 ր., սագօ և պեր-լովայա կրուպա 9 ր., պանիր չեստեր 70 ր., նշտայ կոմանի 18 ր. ֆուտաեր, լուծ-ղական ձեթի պիլիւններ 2 ր., լուացքի փո-շի 5 ր.: ՆՈՐՈՒԹԻՒՆ: Մեղրամմ և արծաթէ մամեր 35 և 42 ր. ֆուտաեր: Մեծ քանակութեամբ անգլիական և ֆրանսիական մահճակալներ 30% էժան քան թէ ուրիշ տեղ, այսինքն երեւանների համար 4 ր., մեծերի համար 12 րուրուց: ԻՍԿԱԿԱՆ ԱՆԳԼԻՍԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ: 13—36

ՐՈՒՍԷԼԻ ՄԱԳԱՋԻՆՈՒՄ ԾԱԽՎՈՒՄ ԵՆ ԷԺԱՆ ԳՆՈՎ

ամեն տեսակ ապրանքներ:

1—3

ԽԱԽԱՐ առաջին տեսակի 70 ր. նոր խախար առաջին տեսակի 1 ր. 20 ր., շորի համար շէտակալներ 30 ր., բազ-կաթոռ-մահճակալներ 10, 14 և 18 ր.: Օրե-րում կը ստացվի ՊԱՆԻՐ չեստեր 60 ր., ֆուտաեր: ԱՆԳԼԻՍԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԵՋ: 8—10

Լոյս տեսաւ ՄԵՐ ՀՐԱՑԱՐԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ IV և V դրոշմը. «Երկու վէպիկ» Անդեր-սենից. «Սոխակ» և «Խոջարած», գին. 20 ր., առ աշխատ գինը: Тифлис. Ред. «Мелъ» Туграны Назарянцъ.

ԱՆԱՀԻՏ

Հին ԶՐՈՅՑ ԳՐԵՑ ՂԱԶԱՐ ԱՂԱՑԵԱՆՑ Գինն է ամեն տեղ ուղարկելով 50 կօպ.

10 օրինակից աւելի գնողներին 20% զե-ջուհն կը լինի:

Պահեստը գտնվում է Թիֆլիզ մեր տպա-րանում: Կարելի է ստանալ և Թիֆլիզի հայ գրադատաներից:

Խոտարհարար կը խնդրում այն մեծ օտա-րաքաղաքացի պարոններին, որոնց ուղարկ-ված է վերոյիշեալ գրքերից փաճառելու հա-մար, թող բարեհաճեն գումարը փոխով մեզ ուղարկելու: Նոյնպէս եթէ կը գտնվեն և ուրիշ քաղաքներից փաճառելու համար ներդրութիւն յանձն առնող պարոններ, թող յայտնեն իրենց կամքը՝ մենք շնորհակալու-թեամբ կուղարկենք նոյա վերոյիշեալ գրք-քերից: Հասցէն՝ մեր տպարանի անունով: Մովսէս Վարդանանց 6—6

2—2

Ամեն 14-ն փաճառովեցաւ Թիւա-թին Եսայեան Հայկազարեանց, որոյ ազգականները ցաօք սրտի յայտնելով, խոտարհարար խնդրում են նրա յիշա-տակը յարգողներից շնորհ բերել հան-գուցելով թաղման հանգիստի շորեք-շարժի օրը ամսոյ 17-ին առաւօտեան ժամը 10-ն Շիջիւլի տանից, որը Գալ-վիսակի փողոցի վրա է, Զրկինանց եկե-ղեցին:

Վաճառվում են 15,000 ամաններ առաջին տեսակի 15 ր. հատը, 12,000 խրուստալի բաժակներ 25 ր. հատը, 10,000 օկալ և բաժակներ 10 ր. հա-տը, 10,000 մատուցարաններ և կող-պէսներ 15 ր. հատը, 10,000 ասեղ 8—40 ր. հատը, 10,000 պանիրներ 5 ր., 5,000 շիշ պօրտ-վէյն և խիւր 1 ր. հատը, 2,000 արշին կլէօնկա 60 ր.—2 ր. արշինը, 2,000 զիւժին մա-տիտներ և գրչակութիւն 8 ր. զիւժինը, 2,000 Փ. հնդկական բրինձ 7, 8 և 10 ր. ֆուտաեր, 1000 ֆուտա լէպէօշկա 50 ր. ֆուտաեր, 600 անգլիական բէվօլի ր 4—34 ր. հատը, 300 անգլիական հրացաններ 20—100 ր. հատը, զրապ, արիփօ, արիփներ, ձեթապալ պալտոներ, գլխարկներ, փարսիկներ, հագուստ կէս գնով: Ծախվում է ԱՆԳԼԻՍԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԵՋ: Նոյն տեղը ծախվում է ծովային ԽՈՏ պուզեր 2 ր. 50 ր., 56—60

ՇԵՐԱՄԱՊԱՀՈՒԹԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԻՒՆ ՆՈՒԹԻՈՒՄ ETABLISSEMENT SERICICOLE DE NOUKA

ՇԵՐԱՄԱՐ ՍԵՐԻԿԵՐ

Գեղին բոժոժների ՖԲԱՆՍԻԱՅԻՑ և ԻՏԱԼԻԱՅԻՑ, արդիւնաբերված ՊԱՍՏԵՐԻ սիստէմայով: Ծախվում է արդիւնաբերող ԼԷՐԻՍԷ մի զօլտնիկ 50 կօպէկ, մի ֆուտաեր 48 րուրը: ԹԻՖԼԻՍԻՄ ծախվում է Պ. ԱԼԲԵՐՏԻ մագաղխում, Գօլօվինսկի պրոսպեկտի վրա, տուն Կոստանային Զուբայովի: ՆՈՒԹԻՈՒՄ պ. ԼԷՐԻՍԷի հիմնարկութեան մէջ: 3—10

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԹԱՏՐՈՆ

ՀԻՆԳԵԱԲԹԻ ՕՐ, 18 ՓԵՏՐՎԱՐԻ



Պալատական արտիստ Նո-րին Մեծութեան Նասր-է-Դին պարսից Շահ-ԲՈՐԲԵՏ ԼԷՆՑ աշակերտ և ազգական նը-շանաւոր պարսիկ կախար-դի, Մահմադ Խալիլի Բէյի:

պատիւ կունենայ տալ հինգշաբթի օր, փետրվարի 18-ին, Արծրունու թատ-րոնում մի մեծ կախար-դական ներկայացում: Մանրամասները աֆի-շաներում:

2—3

Վերականգնեցնող ՄԱԿ-ՄԱՍ-ՏԵՐ, մագիկը ամրացնող և նրանց ԲՆԱԿԱՆ ԳՈՅՆԸ վերագործ-նող, Գինը 2 ր. շիշը, ՓՈՍՏԱ-ՅՈՎ ուղարկված 2 ր. 49 կօպ: ԱՆԳԼԻՍԱԿԱՆ խանութի մէջ:



Մի և նոյն տեղը ԽԻՆԱՅԻ ԻԿՂ, մագիկը ամրացնող հա-մար, 1 ր. ամսուր և վրձին գլխա-ցաւի գէմ, ՏՈՒԱԼԷՏԻ ՍԱ-ՊՈՆ և հոտաւէտ ջրեր և այլն: 79—100

ՎԻԷՆԱՅԻ ՄԵՐԷԼ (աթոռներ և բաղկաթոռներ) ծախվում են մեծ քանակութեամբ և մանր, միջին փողոցում Կատարիկայ փողոցի անկիւնում ՄԻ-ԲԱՅԵԼ ՏԵՐ-ՆԻԿՈԼՈՍԵԱՆԻ պահեստում: Օտարաքաղաքացիք կարող են զիմել այս հասցեով: Тифлисъ, Михаилу Н. Теръ-Никогосову. 141—150

Առաջիկայ 1882 թուականին Շուշի քաղաքում կը հրատարակվի հայերէն լեզուով գը-րականական-քաղաքական և ազգային ամսագիր:

„ԳՐԻԹ“

„Գործի“ իւրաքանչիւր համարը բաղկացած կը լինի 5—6 թերթից (80—90) և գուրս կը գտայ իւրաքանչիւր ամսի վերջում:

Նախագիծ

- ա. Ժամանակագրութիւն. տեղութեան կարգադրութիւններ: Ռուսաց, արտասահմանի և Կովկասի կենքի նորութիւններ:
- բ. Քննական յօդուածներ հայերի և նոյա գրացի ազգերի անտեսական, բարոյական և մտաւարական գրութեան մասին:
- գ. Վէպեր, մանրակէպեր, զրոյցներ, նկարագրութիւններ, ճանապարհորդութիւններ—ինքնուրոյն և թարգմանական:
- դ. Մատենախօսութիւն.—քննութիւն հայերէն լեզուով տպագրվող գրքերի, նոյնպէս այն օտար գրքերի, որոնց նիւթը հայոց ու Կովկասեան կենքիցն է առնուած:
- ե. Քաղաքական տեսութիւն:
- զ. Ներքին տեսութիւն:
- է. Մանկավարժական ժամանակագրութիւն:
- ը. Այլ և այլք:
- թ. Իրիւյ յաւելում և բացատրական և ռուսաց ընտիր հեղինակների գրուածների թարգ-մանութիւն:
- Յայտարարութիւններ:

Հրատարակութեան (12 տետրակ) տարեկան գինն է ամեն տեղ . . . 8 րուրի վէջ ամսուանը . . . 5 րուրի երեք ամսուանը . . . 3 րուրի

Վաճարը կանխիկ է:

Օտարաքաղաքացիք կարող են զիմել այս հասցեով: Шуша. Симеону Ахумянъ, учителю армянской семинаріи.

Իմբագիր—հրատարակիչ Ալմէօն Հախումեանց